



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9 - 37

• ՅԵՐԻՑԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ •

ԳՐԵԳՈՐ ԳԱՐՈՒՆՑ

ՈՐԵՐԻ ՍԻՄՓՈՆԻԱՆ

• ՊԵՏԱԿԱՆ •

891.99

9 - 37

891.99  
9-37

№ 4 ՅԵՐԻ ԳՐՈՂՆԵՐԻ ԱԵՐԻԱ № 4

75K  
6 DEC 2011 01 JAN 2009

ԴՐԻԳՈՐ ԳԱՐՈՒՆ

# ՈՐԵՐԻ ՍԻՄՖՈՆԻԱՆ

ՎՈՏԱԿԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐ



ԽԵԶԱԿ

1932

ԱՆՊԱՎԱՐ

14.03.2013

25154



Մրագրեց՝ Պ. Սարյան

Գլուխիս 2534 (Բ) Հրտու. 2255 Պատվեր 2080 Տերած 8000  
Գևորգանի ապարան, Յերևան

## ՎՈՐՈՒԵՍ ՊՐՈԼՈԳ

Կրկին ահա, առած քնա՞ր,  
Մեր շարքերում ու մեր յերթում  
Մեր պայքարն եմ յես գովերդում  
Մարտնչումի անունը վա՛ռ.  
Թույլ ե, գիտեմ յերգը մեր դեմ,  
Բանակում մեր արիակամ,—  
Բայց փորձում եմ կրկին անդամ  
Մեր պայքարն ու հույզերը տալ...  
Պայքարը բորբ, վոր տողերիս  
Դասակներից ամենքն զգան,  
Լինել արթո՛ւն, լինել զգա՛ւու  
Ու պայքարի յելնեն նորից...  
Ու յես... ու յես վոդով արի,  
Մտած կյանքի անհուն մի հուն,  
Պիտ մաքառեմ, լինեմ արթուն՝  
Բոնած դրոշը պայքարի...  
Իսկ քանի դեռ կոիվ չկա  
(Կոիվ պահի թշնամու դեմ) —  
Յես տեսնում եմ ահա իմ դեմ  
Բանակները կուռ, հաղթական...  
Ու իմ դիմաց կրկին գնդեր  
Ու բանակներ ելի՛, ելի՛ —  
Նարքերը դորչ շմաների  
Վոր գնում են արեգընդեմ...

Զեղ եմ յերդում, մեր բանակի  
իմ ընկերնե՛ր խիստ ու տոկուն,  
Թոփչչովով իմ անսանձ հոգու.  
Ու կորովով հաղթանակի:  
Թող հոգում իմ յելնե՞ն, դոփե՞ն,  
Հույզերը իմ ձև ստանան,  
Վոր մարտիկներն հերոսանան  
Ու առնությամբ կամքս կորիեն...

## ՇՏՈՒՐՄ ՄԱՐԴ

Մըղվենք առաջ, իմ ընկերնե՛ր,  
Յեւենք մարտի կրկին անդամ,  
Տեմպեր պիտ տանք գործարանին  
Մեր ձեռքերից ամբամկա՞ն...

Անլովները մետաղաձույլ  
Թող դառնան մեր կամքի ուժից.  
Մենք միլլոն ենք, հազար ու բյուր,  
Սահման չկա մեր կուռ ուժին:

Մենք ապրում ենք մի դար ահա  
Հախուռն, ու բարդ, ու վիթխարի,  
Ուր շողում ե, վրապես վահան,  
Յելնող ուժը մասսաների...

Ու մենք մասնիկն այդ բանակի  
Յեվ մեր ուժը հրահոսա՞ն  
Դրած վաղվա հաղթանակին, —  
Ահա յելնում ե՞նք, անսասան...

## ՃԱՆԱՊԱՐՀԻ ՅԵՐԳ

Լեռնե՞ր, լեռնե՞ր ծնկաչոք,  
Յեվ արահե՞տ, և ուղի՞  
Դարձրել են պողպատյա  
Յերեկվա հին խճուղին...

Մեր գնացքը անվեհեր  
Սլանում ե սրբնթաց,  
Շուրջը անտառ ու վիհեր  
Ապառաժնե՞ր կրծքաբաց...

Նորից լեռներն են արթո՛ւն,  
Ու հսկելով Դեկ-Բետին  
Իր լույս աշքերն ե թարթում  
Ալլահ վերդին...

## ՏՈՂԵՐ ԼԵՌՆԱՍՏԱՆԻՆ

Կրկին լեռներ, իրար հենվա՛ծ  
Ապառաժներ այնքան մոտիկ.—  
Ասես պառավներ են հինված,  
Կամ ուղտեր են կանդնած վոտի:

Ո՞ւր են այստեղ անտառներն ու  
Խրճիթները հին, տիրադե՛մ.  
Այստեղ բանակն ե արշավում  
Մեր բանակը՝ կաղմած գընդեր:

Այստեղ հնչեց ծեր պոյետի  
Յերգը մի որ լալահառաչ  
Ու արել շրջան գծե՛ց  
Ու տարիներ անցան առաջ:

Յեռ շրջում եմ ահա կրկին  
Հին վայրերը ու իմ դիմաց—  
Բարձրանում ե Ալլահվերդին  
Անհաղթելի բերդի նման...

ՇՈՒԽԴ ՈՒ ԲՈՅ

Այստեղ կըրակը հուրհան  
Հուրհասում ե ու լիզում քեզ,  
Լիզում ծանոթ մի շան նման  
Ու բորբոքվում, դառնում հրկեզ:

Եեվ հոսում ե առո՛ւառո՛ւ  
Առվակներով պղինձը ցած,  
Բորբոքվում ե, կրկին վառվում  
Հրշեկ գուրան պըղնձացած:

Տաշտակները ահա հերթով  
Պըղինձ են կրում, հրահեղուկ  
Պըղինձ մաքուր ու հոգեթով,  
Հաղթանակի հրով բեղուն:

Շուրջը ջղեր ու մկաններ,  
Հնդամյակի գիրքում համառ,  
Վոր պրկվում են միշտ աներեր—  
Վերջին կովի՛, մարտի՛ համար...

ՔԱՐԵ ՔԱՂԱՔ

Քարե քաղաք, քաղաք քարի՛,  
Յեղնող քաղաք բանվորական,  
Ունկնդրում եմ յերգիղ արի  
Ու պայքարիդ հերոսակամ...

Իո մեջ սընլում, ամրանում են  
Հերոսները այն իմ յերկրի,  
Վորոնք յերկրի կուրծքը քերում  
Ու պըղինձ են տալիս յերկրին...

Իո մեջ ահա, քարե քաղա՛ք,  
Տներ տուփի, քար, քարաշեն,  
Ու բարձրացող մի աղաղակ,  
Վորն իմ սրտի քարն ե մաշել...

Ու իմ դիմաց այս ժամին ել  
Բարձրանում ե պատը կանգուն,  
Ողն են ցանցում վիշկաները  
Մկանների ուժովն անդուլ...

## ԹՈՒՂԹ ՅԵՐԵՎԱՆԻՆ

Կուռ բանակից բանվորաձույլ  
Ու լեռներիցն այս աղազուն  
Հերոսական հազար վողջույն  
Մկաններին պիրկ ու բաղում :

Հնկերներիս, վորոնց հատու  
Ամեն զարկն ե մի նվաճում,  
Վորոնց ամուր զարկն ե քանդում  
Պատերը հին, վոր նորն ածի :

Նրանց, վորոնք կամքով արի  
Ու յերեսով յերկրիս դառած՝  
Ռումբ են գցել հին աշխարհին  
Հայացքները հեռվին հառած :

Իմ ընկերներ մոտիկ, հեռու,  
Ուր ել լինենք՝ մեր կամքն ե մի,  
Մենք ել վայրի այս լեռներում  
Թափի ենք տվել քլունդներին...

## ԱՇՈՒՆ

Մաքըրվել են դաշտ ու սար,  
Միայն քամին ե սուրում,  
Տերևներին հավասար  
Քսվում ե ու համբուրում :

Ճըթճըթում են հողի տակ  
Սերմերը մեր անհամար,  
Վոր յերբ գարունը զա տաք—  
Նրանք ծըլեն, ամրանան...

Վերջին տերևն ել ահա  
Քամին տարավ ու քչեց,  
Շուտով ձըմեռը կըա,  
Կտարածի իր վեշերն :

ՀԱՍԿԵՐԸ

ԶՆՀԱԼԻՑ ՀԵՏՈ

Շուտով գարո՞ւն, գարո՞ւն,  
Արե չողջողան,  
Հողից կենսն բաղում  
Միւեր կամրանան:

Արեք փայլ կտա  
Հողին ու քարին.  
Կրկն մարտի կդան  
Մկանուքն արի...

Ելի ժուբճեր կզնդան  
Կիսավարտ պատին,—  
Այս քարերի վրա  
Քրտինք կըկաթի:

Արտերում վոսկի  
Կորի կա բազկի,  
Արտերը փովել են անափ,—  
Հասկերը հասուն են,  
Հունձն ակսվում ե,  
Արտերում պայքար ե ու թափ:

Արտերում այսոր  
Մեքենան հզոր  
Կտրատում ե ցողունը հասկի,—  
Նա իր ձիու աշշավով  
Այնքան ե արշավել  
Ու առաջ անցել բազկից:

Կուրծքը բաց թողել  
Գըցել ե չողեցն  
Հըկեղող արեն ամառվա  
Ծծում ե հողը  
Արեի չողը,  
Վոր ինքն ել վառվի, ամրանա:

Հերկի՛ր, արակառ՛ր,  
Դաշտը ամեն որ,  
Մեր հողերը լայն ու անծիր,—  
Ամեն մի ակոսդ  
Թշնամուն մի փոս ե.  
Ակոսի՛ր, արշավե՛ր, անցի՛ր...

## ԱՐՏԵՐԳ

Մեր արտերում շափշափում են  
Մեքենաներ դվարթածայն.  
Արեն արտի սիրտն եր լափում,—  
Յերաշտի են տարին անցավ:

Արտն և կանգնել, վորպես ահա  
Մի մեծ բանակ հաղարանոց.  
Ցողումներն են առել հասակ  
Արտերի այդ զորանոցում...

Ու քսվում են սիրով իրար,  
Փսփսում են, խոսում կամաց,  
Շորորվելով հարսի նման,  
Մի կարոտ են վառել անանց...

Ու արեն և ճառագայթել  
Դաշտի, հանդի, արտի կողին,  
Յերբ ել չկան թումբ ու ափեր  
Համայնական մեր հողերին...

Մեր արտերում շափշափում են  
Մեքենաներ դվարթածայն.  
Տարիները սով, յերաշտի  
Հե՛յ ջան, անցան, Հե՛յ ջան, անցա՞ն...

## ՅԵՐԳ ԲԱՄԲԱԿԻՆ

1.

Բամբակի արտ, ծփա'  
Ու պըսպղա' ձյան պես.  
Ճուտով ձեռքեր կդան  
Ու կպարզվեն քեզ:  
Զերմ արել ծնծղան  
Կոփեց քո ցողումը.  
Ծփա', ա'րտ իմ, ծփա',  
Քանի դեռ հողումն ես...

Ասղտող ձյան պես,  
Բամբա'կ, քո փաթիլը  
Թշնամու արտի մեջ  
Մահացու կաթիլ ե.  
Ծփա', ա'րտ իմ, ծփա',  
Շորորա հարսի պես.  
Ահա ձեռքեր յեկան  
Ու պարզվեցին քեզ...

2.

Արել ցրել ե լուսե  
Խրձերը արտի վրա,—  
Արեն որն և կիսել:

Ժպտում են արտերն անծայր  
 Արևի լույսի ներքո,  
 Արտերում գործում են դաշճյալ  
 Մարդիկ՝ կոչտաշած ձեռքերով...  
 Քաղում են բամբակը,  
 Քաղում են—  
 Ու ամեն քուլան քաղելիս  
 Թշնամու սիրտը  
 Դաղում են...

Իսկ այստեղ,  
 Քաղաքում հելիհեղ,  
 Գործում են իլիկ ու մաշին,  
 Դառնում ե մաքոքը,  
 Դառնում ե,  
 Դառնում ե անթիվ, անհաջիվ:

Արևը ցրել ե լուսե  
 Խուրձերը արտի վրա,  
 Արևը որն ե կիսել.  
 Իսկ դաշտում բամբակի  
 Գործում ե ձեռքը,  
 Վոր հասնի Փարրիկին  
 Առաջին բերքը...

## ՅԵՐԳ ԿԵՍՈՐԻԻ

Արևը վոսկի յե մազում  
 Արտերի, դաշտերի վրա.  
 Հնձանում, արտերում ու բաղում  
 Շողում և բերքը հուրհան:

Արևը շարում ե ասեղ,  
 Հասել ե բերքը ամոան,  
 Արտերում կոփկ ե ասես,  
 Կոփկ, բայց հողերի վրա:

Թշնդում են արտերը հիմի,  
 Արտերը ժպտում են բերքեց,  
 Արև՝ հուր մի սինի՝  
 Կախվել ե կապույտ յերկնքեց...

Ամենուր արե՛վ ե ու կեսոր,  
 Թնդում են արտերը, յեռում՝  
 Ու նրանք ծալում են ես որն ել  
 Հաղթությամբ ու բերքով բեղում...



## ՎԵՐՆԱԳԻՐ

Այս որերի համար

Ու վերելքի—

Ահա յերդն իմ անմար,

Դեսն իմ յերգի:

Թող կարկաչեն հավերժ

Այս որերի խինդով

Իմ յերգերը անվերջ:

Թող ամրանա ծա՛ռը

Իմ յերգերի,

Վոր նա լինի պայծառ,

Իմաստալի:

Այս որերի համար

Ու վերելքի—

Ակոս յերդն իմ անմար,

Դեսն իմ յերգի:

## ՀՈՒՅՆ

Սվյանե՛ր, սվյանե՛ր, սվյանե՛ր,

Իմ շուրջը դեմքերն են արի,

Իմ շուրջը նոր կյանք ու ընկերներ՝

Մտած նոր հունը պայքարի:

Արևը փոել ե նարինջ

Ծնկաչոք սարերի վրա,

Իսկ ողում ապակյա ու ջինջ

Ամրակամ գործում են նրանք:

Ու թողած քարաշեն քաղաքն ու.

Դործատան շակները խոսում,

Լսում եմ այստեղի աղաղակը,

Այստեղի կանչերն եմ լսում...

Նրա ձայնը խրոխտ հնչում ե՝

Շինելով են ուղի ամրակուռ,

Ու թոչում, իմ միտքը թոչում ե

Զգիտեմ դեպի ուր, դեպի ուր...

Հրեղեն բաշերի նման

Մազերը վոսկեհեր ու գանգուր—

Փռվել են ճակատի վրա

Ու սեղմել են գանդը...

Աչքերը կապտալին ու ծավիր,

Հասակը բարձր ե, պարթև.

Հպարտ ե, նման արծվի,  
Քայլվածքը թեթև.  
Այդ նա յե... այդ նա յե... այդ նա յե,  
Հերոսն ե չդրված յերկիս,  
Նա ինձ այնքան հմայել ե  
Իր շունչը տալով իմ յերդին:  
Ու իմ դեմ, իմ դիմաց ահա,  
Բրոնդե արձան մի վոլակես,  
Աչքերում վճիռ մի պահած՝  
Կանգնել ե զինվորն՝ իմ ընկերը:

Հիշում եմ. կոփվ եր, արյուն,  
Փողոցում ցույց եր, բարիկադ,  
Քաղաքում կյանքն եր մեռնում,  
Հերոսները փոլում  
Պատի տակ:

Յել ահա նա, այդ պարթե  
Հասակով բարձր զատանին,  
Վոր այժմ կանգնել ե թեթև  
Իր նման շատերի թիկունքում:—  
Կովեցին, կովեցին, կովեցին,  
Արյունը լճացափ, հոսեց,  
Մարտիկներն ընկան, փովեցին,  
Ճակատում թնդանոթը խոսեց:

Իսկ հետո սպիտակ շաղեկը  
Արյունով ներկվեց, բարձրացավ,  
Բարձրացավ վրակես դրոշակ մի—  
Ու ոքեր անցան...

Երեք զծում եր չըջան,  
Դաշուրին թզում եր թույն,—  
Զեռքներին՝ կրկին հրացան,  
Ճակատում՝ պայթյուն:—

Բանակը մեր յելած հնձի  
Կովում եր... մարտնչում... յենում...  
Վընջում եր, դոփում կարմիր ձին  
Ու կրկին հաղթանակ բերում...

Հրեղեն բաշերի նման,  
Սաղերը վոսկեղույն, թել-թել—  
Նրա բաց ճակատի վրա  
Նստել են թեթև.  
Թվում ե, թվում ե նրա  
Ճակատը այն մեծ ճակատն ե,  
Ուր վոր դեռ պիտի  
Բարձրանան  
Ու կրկին բանակներ ճակատեն:—

Կանգնել ե զինվորն այդ՝ պահակը,  
Շրջում ու հիշում ե մեկ-մեկ,  
Վո՞ր դեպքը յե՞րբ պատահեց,  
Ու իրենց ուժը անթեք...  
Շրջում ե... իսկ շուրջը նրա  
Արևն ե, չափրան ու շո՞ղ,  
Ու կանաչ սարերի վրա՝  
Մեր բանակն ե՝ կուռ ու մարտնչող...  
—

Իրենց վրա կրեն  
Ընկածի անունը...

Թող վոր շարքերը մեր  
Ամրանան ու յելնեն,  
Ռազմաձակատ նետվեն  
Հորդ հեղեղի նման.  
Նրա մահն այսոր  
Միլիոններ ե հանում,—  
Թող ընկած մարտիկի  
Անունը վառ մնա...

## ՀԻՇԱՏԱԿԻՆ

Թող խոնարհվեն պայծառ  
Դրոշակները մեր,  
Շոնդալով չողան  
Այս աճյունի վրա.  
Փողոցներում կրկին  
Թող վողողի յերթը,  
Վոր ընկած մարտիկի  
Անունը վառ մնա:

Նա պայքարում յեղավ,  
Ճակատներում մարտեց,  
Վըրեժով մի առահ  
Թշնամու դեմ դնաց.  
Բանակով մեր անթեք  
Ճանապարհներ Հարթեց,—  
Թող ընկած մարտիկի  
Անունն անմար մնա...

Նա մարտիկ եր կովում,  
Արիակամ դինվոր,  
Ռազմաշաշտում ահեղ  
Հաղթանակ եր տանում.  
Դրոշակները մեր  
Շոնդալով թող վեհ

## ՏԱՍՆԱՄՅԱ ՏԱՐԵԴԱՐՁ

... Յեզ ուր առաջ բանտ եր խավար,  
Ճորտություն եր ուր լուս քեզ...  
ՅԵ. ԶԱՐԵՆՑ

Տոն ենք տոնում եսոր խնդում,  
Մեր նոր յերկը տոնն ե եսոր,  
Կանգնել ե մի վոսկե կեսոր,  
Կուռ շարքերն են դոփում, թնդում:

Յես գնում եմ ուղի անցած  
Շարքերի հետ այս տոն որին,  
Բարձրանում են մտքիս Փոնին  
Տարիները անեյացած:

Տասը տարի, տասը գարուն,  
Ու տարիներ ելի անդին,  
Յերբ մեր չուրջը մոխիր եր, դէ,  
Ու գարին եր սառել արյուն:

Սրեր, թրեր ազգամիջյան,  
Թնդանոթի, ոռւմբի վորոտ,  
Յերկիրը՝ նոր կյանքի կարոտ՝  
Բաղմաճակատ, կռվի իջած:—

Եսոր տոն ե, եսոր խնդում,  
Ու արմն ե շարում ասեղ.

Ո, ել ինչո՞ւ հինը ասել,  
Յերբ չուրջը մեր կյանքն ե թնդում:

Եսոր Լենինն ե մարմնանում  
Մեր գործի մեջ,—ու պայքարի  
Հոծ շարքերով, խիզախ, արի—  
Դա մեր բանակն ե ամբանում...

ՄԵՆՔ ՊԻՌՆԵՐՆԵՐՍ...

Մենք ծնվեցինք հոկտեմբերյան  
Կոխվների հնոցում,  
Յերբ վոր գետն եր հոսում արյան  
Պատերի տակ, փողոցում :—

Յերբ մեր հայրերը պարզած վեր  
Վառ դրոշները կարմիր՝  
Կովում եյխն ու մարտնչում  
Արիակամ ու ռադմի :

Մենք ծնվեցինք վառ ու հրե  
Որերում թեժ ու արի,  
Խսկ այսոր մեր կամքն ենք դրել  
Մեր վեհ ու մեծ պայքարին :

Արեգակն ե շողշողում մեզ  
Յեկ խոլ պայքարն ե կանչում,  
Խսկ մենք կամքով անթեք ու վես  
Նվաճում ենք ու աճում;

ՊԻՌՆԵՐԱԿԱՆ

Ճեփորի՛ր,  
Ճեփորի՛ր,  
Ճեփորի՛ր,  
Թմբկահա՛ր, թմբուկի զա՛րկ ուժդին,  
Վոր մեր այս վճռական որերի  
Ընթացքը ամրանա և ուժդնի :

Թող փովեն հաղթությամբ ամենուք  
Տեղերը՝ պայքարով մեր գնած,  
Ու լինի շարվածքը մեր ամուր,  
Հեմքը, վոր բետոնից ե դրած :

Լենինյան փարոսը մեր ճամբի  
Ամեն մի կայանում թող չողա՛,  
Վոր կամքը պայքարում մեր կոփվի,  
Մեր կամքը չերերա, չէողա :

Զեռքներս առողջ և առույթ են,  
Առջեռում մարտեր կան վճռական,  
Մեր սիրտը խնդությամբ թող զարկե,  
Վոր հաղթենք պայքարում վերջնական :

Ճեփորի՛ր,  
Ճեփորի՛ր,

Յ ե փ ո ր ի' ը ,  
Թմբկահար , թմբուկդ զա՛րկ ուժդին ,  
Վոր մեր այս վճռական որերի  
Ընթացքը ամրանա և ուժդնի :

## Հ Ն Ո Ց Ի Մ Ո Տ .

Մեզ մոտ մկան , ջանք ու լարում ,  
Ու պըղնձի հուրն ե անմար .  
Պլանների կատարումը  
Դարձել ե գործ , փառքի համար :

Պղնձաղեմ մարդիկ այս կողմ  
Ու հալոցներ լայնայերախ ,  
Ուր-վոր պղինձն ե աղմկում  
Ու ծայր առնում վոսկու յերակն :

Իսկ այս գծով կերման ու կոր ,  
Վորպես հլու կամկատար ,  
Պըղինձ են կրում հազար վագոն  
Անհատուելի ու անդադար :

Վոր հնոցում պըղինձը չեկ  
Եելնի , յեռա ու վարարի ,  
Ու պայքարով առաջ քշենք  
Տեմպն ու թոփչքն այս որերի :

## ԱՃՈՒՄ

Ջեռքերը շարում են, շարում,  
Պատերը հասնում են յերկինք,  
Նստում են քարերն, ամրանում,  
Բարերը՝ հիմնաքար վերեւթին:

Քրտինքը կրթում ե հողին,  
Դեմքերին բրոնդի փայլն ե,  
Բարձրանում ե պատը հողից,  
Վայրկյանը վայրկյանին՝ այլ ե:

Իշնում են մուրճերը, զրնգում,  
Հղկվում են քարերն անհամար,  
Լարում են մկան առ մկան  
Ու դործում վերեւթի համար:

## ՏՈՂԵՐ

Տե՛ս, արեն ե յելել անգայթ,  
Գյուղերն անթիվ իրար յեկած,  
Առորյան ու աշխատանքը  
Յերբեք չեղած չկրկնված:

Ուր գյուղերում զրնգում ե  
Նոր վարարող կյանքի առուն,  
Վորքան ուրախ, տե՛ս, բացվում ե  
Յերկաթավոր, իսկնդով գարուն:

Զգաստ յեղի՛ր, զգաստացի՛ր,  
Յերդի՛ր ուրախ յերդը նրանց,  
Թող հաղթական գարուն բացվի  
Խորհրդային գյուղի վրա...

ՊԱՅՔԱՐ

Հանքերում պայքարը համառ ե,  
Համառ ու անդիջում են մերոնք,  
Դրսում չող, մրգահաս, ամառ ե,  
Իսկ հանքում կոչտացած ձեռքերով  
Քերում են բերքը լեռների:

Այստեղ լեռները քերում են,  
Վոր յելնի պլղինձը հուրհրան,  
Թշնամին անկանդ դեգերում ե,  
Վոր սաստի թափը նրանց  
Ու իրեն ճանապարհ բանա:

Համառ ու անդիջում են մերոնք,  
Բանդում են կուրծքը լեռների,  
Վոր յելնի կոչտացած ձեռքերով  
Պլղինձը՝ յերկիրն հեղեղի  
Ու նրան դեպի վեր հրի...

Իջնում են զարկերը համառ,  
Բանդում են նրանք անդիջում,  
Պլղինձի պլանի համար  
Մուրճերն են հարվածում,  
Իջնում...

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

1.

Մենք գիտենք, վոր մոտ ե բոսկեն  
Հատուցման ու հաղթանակի,  
Յերակները թող տրոփեն,  
Մենք գիտենք, վոր մոտ ե բոսկեն:  
Մենք մեր վաղը պիտի կոփենք  
Կորովով մեր կուռ բանակի, —  
Մենք գիտենք, վոր մոտ ե բոսկեն  
Հատուցման ու հաղթանակի:

2.

Հաղթանակն ե աճում ահա,  
Դրավում ենք դիրքեր, դիրքեր,  
Բարձրանում ենք, վորպես վահան,  
Հաղթանակն ե աճում ահա:  
Մեր ուղին ե ձիգ, պողպատյա,  
Նրա վրա խութեր, վիճեր: —  
Հաղթանակն ե աճում ահա,  
Դրավում ենք դիրքեր, դիրքեր: —

3.

Ժայռերն են ընկնում յերեր,  
Արշավում ենք արի, անտող,

Մեր մուրճերից՝ հնին հաղթող՝  
Ժայռերն են ընկնում յերեր։  
Բերդերն են այստեղ յելել  
Հնի վրա, հինը քանդող, —  
Ժայռերն են ընկնում յերեր,  
Արշավում ենք արի, անդող։

4.

Հերոսների կամքը անդուլ  
Բարձրացել ե, վորպես վահան,  
Կապանքներն ե հնի քանդում  
Հերոսների կամքը անդուլ։  
Այս լեռներում ու անդնդում  
Պայքարի յե յելել ահա  
Հերոսների կամքը անդուլ, —  
Բարձրացել ե վորպես վահան։

5.

Մեր մուրճեցն են վես ու համառ  
Ժայռերի դեմ հնամենի,  
Պայքարողը վաղվա համար  
Մեր մուրճերն են վես ու համառ։  
Մեր հոգու մեջ հույղն ե դամած  
Ու կորովն ե մարտիկների, —  
Մեր մուրճերն են վես ու համառ  
Ժայռերի դեմ հնամենի։

6.

Հալոցներում լայնայերախ  
Հուր-հուր պըղինձն ե աղմկում,

Մայր ե առել վոսկու յերակն  
Հալոցներում լայնայերախ.  
Հնոցները հուր են թքում,  
Բորբոքվել ե հրշեկ քուրան, —  
Հալոցներում լայնայերախ  
Հուր-հուր պըղինձն ե աղմկում . . .

7.

Կորքան ել վոր խութեր բարդեն,  
Արդելակներ դնեն մեր դեմ, —  
Ճանապարհը մենք կհարթենք,  
Վորքան ել վոր խութեր բարդեն։  
Կարմիր դրոշը դըծից դուրս  
Տարածվում ե ահա արդեն, —  
Վորքան ել վոր խութեր բարդեն  
Արդելակներ դնեն մեր դեմ . . .

8.

Ֆրոնտներում մեր պայքարի  
Դասակարգն ե յելել անթեք,  
Մկաններն են ձգվել արի'  
Ֆրոնտներում մեր պայքարի,  
Մենք յելել ենք կուռ, վիթիարի  
Ու չեն կարող ել մեզ թեքել.  
Ֆրոնտներում մեր պայքարի.  
Դասակարգն ե յելել անթեք . . .

Փոխում հն լնթացքը  
Տաշտակների վրա...

Ու մինչեւ այս ժամը  
Արեգնային ու պարզ,  
Մինչեւ դալուսուր  
Զորբորդ ջոկատի—  
Նրանք դործում են  
Զգաց, արագ ու վարժ,  
Ու քրտինքն ե հոսում  
Նրանց վեհ ճակատից...

## ՊՂՆՉԱՋՈՒԼԱՐԱՆՈՒՄ

Այստեղ հնգամյա  
Հերոսներն են տեմպի,  
Մրախառն քրտինքը  
Վողողի և նրանց.  
Արդեն ութը ժամ է  
Անցել կես դիշերից,  
Բայց կանգնած են նրանք  
Բարիկադի վրա:

Բարիկադը նրանց  
Մի ճակատ և դառել,  
Կովի մեծ մի Փրոնտ,  
Ու բրոնզե մարդեկ  
Իրենց կոշտ ձեռքերի  
Մկաններն են լարել  
Ու կանգնել են նրանք,  
Վորոկս մի մի մարտիկ...

Ու հոսում ե նորից  
Զուրը փրփրակալած,  
Ու պղնձն է ժայթքում  
Վորպես մեծ մի լավա,  
Իսկ բանվորներն ահա  
Զիռ ձողերը առած

## ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄ

Հասունացել եմ պայքարում,  
Պայքարում եմ հասունացել  
Յես ապրում եմ այս վեհ դարում  
Ու մի անցյալ եմ ունեցել:

Յես չեմ բերել ինձ հետ հնի  
Ո, վո՞չ մի չերտ, վո՞չ մի մորմոք.  
Ինձ կոփել են քուրաներն ու  
Հնոցները մշտաբորբոք:

Ինձ լիգել ե նրանց հուրը,  
Կոչտ դեմքեր են շուրջա յեղել,—  
Դրանից ե, վոր ամուր եմ,  
Վո՞չ թե աշնան թույլ մի յեղեղն...

Քաղցր ե կոփող կյանքի՝  
Առողյայի խոհով լեցուն,  
Յես տվել եմ իմ խոկ կամքին  
Կյանքի դասը, վառ ու ցնծուն:

Ու այժմ, յերբ հասունացել,  
Ել նման չեմ անտաշ քարին—  
Վերելքներ եմ յես ունեցել՝  
Կամքը ուսած մեր պայքարի:

## ՎԵՐՋԵՐԳ. ՆԵՐԲՈՂ

Վարաշիլովյան բանակը կուռ,  
Վորն անթեք ե, պողպատակամ,  
Յեվ շարքերով իր յերկաթակուռ  
Նետվել ե մարտի ամեն անդամ,  
Յերբ թշնամին ե յելել հախուռն,—  
Կրկին մարտի յե յելնում արի,  
Ու զեկավարի խոռօքին զգաստ  
Զդառում ե դիմել գոռ պայքարի,  
Բայց դեռ կանգնած ե կաղմ ու պատրաստ  
Խոկ զեկավարը այն պողպատե  
Կտա հրամանը արի՝, անդող,—  
Նա համոզված ե, նա լավ զիտե,  
Կոր բանակ կա միայն հաղթող,

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վարդես պլուզ
2. Շտուրմ-մարշ
3. Ճամապարհի յերգ
4. Տողեր լեռնաստանին
5. Շոխնդ ու բոց
6. Քարե քաղաք
7. Թուղթ Յերևանին
8. Աշուն
9. Զնիալից հետո
10. Հասկերը
11. Արսերգ
12. Թերգ բամբակին
13. Յերգ կեսորի
14. Վերնագիր
15. Հուշ
16. Հիշատակին
17. Տասմամյա տարեդարձ
18. Մեմք պիոներներ...
19. Պիոներական
20. Հնոցի մոտ
21. Անուժ
22. Տողեր
23. Պայքար
24. Տրիունֆեր
25. Պղնձաձուլարանում
26. Հասումացում
27. Վերջերգ. ներքոդ

ՀՀ Ազգային գրադարան



NL0330382

25154

4Н20 75 ЧПО

Григор Гаруин  
**СИМФОНИЯ ДНЕЙ**

ГИЗ ССР Армении Эրևан